

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029 ԹԹ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Ներածություն | 3 |
| 1. Հաստատության գործունեություն | 6 |
| 2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները | 10 |
| 3. Մանկավարժական համակազմի զարգացման կարիքները | 22 |
| 4. Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ կողմերը | 26 |
| 5. Խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը | 30 |
| 6. Շենքային պայմանների նպատակային գործածությունը | 41 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029 թվականների ծրագիրը մշակվել է հիմքում ունենալով դպրոցում առկա խնդիրների նկարագրությունը և դրանց ուղղված լուծումները: Իմ նպատակն է՝ ծրագրում հստակ և իրատեսական ներկայացնել առկա իրավիճակը, որի հիման վրա կազմելու են դպրոցի զարգացման ուղղությունները և դրանց ուղղված ռազմավարությունը: Դպրոցի գործունեության պլանավորումը ներկայացրել են ըստ փուլերի ու ոլորտների՝ հիմքում դնելով հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջները: Մշակել են կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները, սահմանել հիմնական ռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները:

Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, կազմվել են հարցաթերթիկներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել են հնարավոր լուծումներ և գործողություններ:

- Նպատակների և խնդիրների լուծման հիմքում դնել «Կրթության զարգացման պետական ծրագիրը»
- Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներով առաջնորդվելը
- Սահմանել հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները
- Սահմանել հիմնական ռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները

Զարգացման ծրագրի իրավական հիմքերը

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
- Աշխատանքային օրենսգիրք

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր, Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ, կարգեր

Ձարգացման ծրագրի իրականացման ժամանակահատվածը

2024-2029 թվականներ

Ձարգացման ծրագրի նպատակը

Պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Ձարգացման ծրագրի խնդիրները

Առաջիկա 5 տարում զարգացման առաջնահերթությունների կանխորոշում և կրթության որակի բարելավում: Դպրոցի ներքին նորմատիվ իրավական ակտերի վերաձևակերպում այնպես, որ այն բխի ծրագրում շարադրված առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից:

- Բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում՝ սովորողների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:
- Դպրոցում ստեղծել մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, արժանապատիվ վարձատրություն, հարգանքի, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
- Այնպիսի կրթական ծրագրերի և գործողությունների մշակում, որոնք կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը, կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը, կապահովեն արդիականացված կրթական և առողջ միջավայր,

որը կհամապատասխանի համայնքի կարիքներին, արդի կրթության պահանջներին, ինչպես նաև կնպաստի սովորողների էմոցիոնալ ինտելեկտի զարգացմանը, քննադատական մտածողության ձևավորմանը:

Չարգացման ծրագրի տեսլականը

Մինչև 2029 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացող պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներ, գործնական հմտություններ ու ժամանակակից և նորարարական կարողություններ տրամադրող առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը հանրապետությունում:

1. Հաստատության գործունեությունը

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Ժամանակակից գիտությունը և տեխնիկան զարգանում են մեծ արագությամբ՝ ներթափանցելով կյանքի կազմակերպման, հասարակական հարաբերությունների, գիտելիքների ձևավորման, գիտելիքների ձեռքբերման և փոխանցման ոլորտ: Այդ պատճառով հանրակրթության էական բարեփոխումը և աննախադեպ զարգացումը դառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

Պետության և ազգի անվտանգության ապահովման և հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Դպրոցում հոգևոր մշակույթի սաղմերը ամրապնդվում են ժողովրդի լինելիությամբ, բարգավաճմամբ և զարգացմամբ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, ով ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:

Հաստատության գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին: Հաստատության լիարժեք գործունեության համար պետք է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը, սերմանել արժանապատվություն, հայրենասիրություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը: Կարևոր է նաև ուսուցողական միջավայրը դարձնել անվտանգ, հիգիենիկ, հետաքրքիր, գեղագիտական:


«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական հիմնական դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը գտնվում է ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր, Դպրոցականների փողոց, թաղամաս 9-րդ հասցեում: Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցը մինչև 2013թ. Եղել է Տաշիրի թիվ 4 միջնակարգ դպրոց /նախկինում Կալինինյի ռուսական դպրոց/ կառուցվել է 1969թ., իսկ վերակազմավորվել է 1986 թ: Այն նախատեսված է 700 աշակերտի համար: Դպրոցն անվանակոչված չէ:

2017 թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետ. ռեգիստրի Տաշիրի տարածքային բաժնում: Նույն թվականին հաստատվել է դպրոցի կանոնադրությունը:


Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2001թ.-ի մայիսի 5-ի հ.617-Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ ծրագրերը.



- տարրական ընդհանուր - 280 տեղով,
- հիմնական ընդհանուր - 440 տեղով

Դպրոցում 2023-2024 ուսումնական տարում կրթություն են ստանում՝

- տարրական՝ 170 սովորող,
- հիմնական՝ 249 սովորող:



Առաջին աստիճան - տարրական դպրոց

Առաջին աստիճանի խնդիրները

- Ուսումնառության նկատմամբ ձևավորել դրական շարժառիթների ամբողջություն Երեխաների ընդհանուր ընդունակությունների զարգացում և նրա ախտորոշումը
- Տարրական դպրոցին անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում
- Շրջապատող աշխարհի ամբողջականության ընկալում
- Շարունակել կրտսեր դպրոցի աշակերտների հոգեբանական նախապատրաստումը միջին օղակում սովորելու համար:

Երկրորդ աստիճան - հիմնական դպրոց

Երկրորդ աստիճանի խնդիրները

- ամուր, կայուն և խորը գիտելիքների ձևավորում, շրջապատող աշխարհի ամբողջական ընկալում
- հետագա մտավոր աշխատանքի հմտությունների ձևավորում
- շարունակել դաստիարակչական աշխատանքը ստեղծագործող անհատի և բարոյական բարձր որակներ ունեցող սովորողներ ձևավորելու ուղղությամբ
- սովորողների և նրանց ծնողների հետագա շփումը առողջ ապրելակերպին:

Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ մարդկային ռեսուրսներով՝

| Մանկավարժական հաստիքի անվանումը | Հաստիքի թիվը |
|---|--------------|
| Տնօրեն | 1 |
| Վարչատնտեսական համակարգող | 1 |
| Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 2 |
| Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով | 1 |
| Ուսուցիչ | 26 |
| ԴԱԿ | 1 |
| Հոգեբան | 1 |
| Զինդեկ և քաղաքաշտպանության շտաբի պետ | 1,3 |
| Ուսուցչի օգնական | 1.5 |
| Օպերատոր | 1 |
| Հաշվապահ | 1 |
| Գործավար կամ անձնական կառավարման մասնագետ | 1.5 |
| Հավաքարար | 4 |
| Գրադարանավար | 1 |
| Պահակ | 4 |
| Հնոցապան | 0,5 |
| Խոհարար | 1.3 |

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Կրթության մասին» ՀՀ օրենքում կրթության որակը սահմանվում է՝ որպես կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք: Վերջինիս գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ բաղադրիչների արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

Դրանք են՝

1. Սովորողի անհատական կարիքներ
2. Ուսուցման ծրագրային բովանդակություն
3. Կրթության կազմակերպման գործընթաց
4. Ուսումնառության գնահատված արդյունքներ
5. Կրթության կազմակերպման միջավայր

Ծրագրում կարևորվել են նաև նախագծային ուսուցմանը՝ որպես նոր չափորոշիչների կարևոր գործիքի անցում կատարելու անհրաժեշտությունը, մասնագիտական կողմնորոշման ակումբների ստեղծումը, նոր չափորոշիչների բաղադրիչ գնահատման ձևերի բազմազանության, որակական գնահատման համակարգի, հատկապես ձևավորող գնահատման ներդրումը, որը հնարավոր կդարձնի անցումը նաև կարողունակությունների ձևավորման աստիճանի գնահատմանը արժեքների և դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից:

Կարևոր ենք համարում դպրոցի զարգացման հետագա ընթացքն ապահովելու նպատակով տարբեր միջոցառումների իրականացումը, որն ավելի արդյունավետ կդարձնի որակի բարձրացման ուղղությամբ աշխատակազմի գործադրած ջանքերն ու ներդրումները: Դպրոցի տնօրենության մանկավարժական և ուսումնասօժանողական անձնակազմի կողմից հետևողական աշխատանք է տարվել այդ բաղադրիչների ապահովման ուղղությամբ, որի շնորհիվ շատ ցուցանիշներ բարելավվել են: Դրան նպաստել են ներքին գնահատման գործիքակազմի օգտագործումը, կադրերի վերապատրաստման աշխատանքների կատարելագործումը, դասավանդման հմտությունների զարգացումը, վերահսկողության տարբեր ձևերի ներդրումը, ուսումնական միջավայրի նորացումը և այլն:

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2021-2022
ուստարում՝

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | |
|---------------------|------------------|-----------|--|------------|---|------------|
| | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ. դաս. | 4-րդ դաս. | 9-րդ. դաս. |
| Մայրենի | 43 | | 6,97 | | 7,3 | |
| Մաթեմատիկա | 43 | | 7,1 | | 6,2 | |
| Հայոց լեզու | | 36 | | 5,61 | | 13,4 |
| Գրականություն | | 36 | | 5,94 | | 6,5 |
| Հանրահաշիվ | | 36 | | 5,8 | | 13,3 |
| Երկրաչափություն | | 36 | | 5,86 | | |
| Հայոց պատմություն | | 36 | | 5,86 | | 6,2 |
| Համաշխ. պատմ. | | 36 | | 5,97 | | |
| Հասարակա-գիտություն | | 36 | | 6 | | |
| Հայ. եկ. պատմ. | | 36 | | 5,8 | | |
| Ֆիզկուլտուրա | | 36 | | 7,97 | | 7,8 |
| Ռուսաց լեզու | | 36 | | 6,69 | | 6,6 |
| Անգլերեն | | 36 | | 6,2 | | 7,5 |
| Ֆիզիկա | | 36 | | 6,38 | | 11,6 |
| Կենսաբանություն | | 36 | | 6,52 | | 18 |
| Քիմիա | | 36 | | 6,83 | | |
| Աշխարհագրություն | | 36 | | 6,5 | | 13,3 |
| Ինֆորմատիկա | | 36 | | 6,3 | | |
| ՆՁՊ և անվտանգ գործ. | | 36 | | 7,27 | | |
| Ընդամենը | 43 | 36 | 7,06 | 6,32 | | 10,4 |

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023
ուստարում՝

| <i>Հիմնական առարկաներ</i> | <i>Սովորողների թիվը</i> | | <i>Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը</i> | | <i>4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը</i> | |
|---------------------------------|-------------------------|------------------|---|------------------|--|------------------|
| | <i>4-րդ դաս.</i> | <i>9-րդ դաս.</i> | <i>4-րդ դաս.</i> | <i>9-րդ դաս.</i> | <i>4-րդ դաս.</i> | <i>9-րդ դաս.</i> |
| <i>Մայրենի</i> | 40 | | 6,85 | | 6,67 | |
| <i>Մաթեմատիկա</i> | 40 | | 6,97 | | 7,4 | |
| <i>Հայոց լեզու</i> | | 42 | | 566 | | 13,8 |
| <i>Գրականություն</i> | | 42 | | 6,38 | | 14,5 |
| <i>Հանրահաշիվ</i> | | 42 | | 6,09 | | 13,7 |
| <i>Երկրաչափություն</i> | | 42 | | 6,14 | | |
| <i>Հայոց պատմություն</i> | | 42 | | 5,83 | | 12 |
| <i>Համաշխ. պատմ.</i> | | 42 | | 5,83 | | |
| <i>Հասարակա- գիտություն</i> | | 42 | | 6,1 | | |
| <i>Հայ. եկ. պատմ.</i> | | 42 | | 5,85 | | |
| <i>Ֆիզիկուլտուրա</i> | | 42 | | 7,88 | | 7,3 |
| <i>Ռուսաց լեզու</i> | | 42 | | 6,61 | | 13,9 |
| <i>Անգլերեն</i> | | 42 | | 6,26 | | 18,6 |
| <i>Ֆիզիկա</i> | | 42 | | 5,86 | | 15,5 |
| <i>Կենսաբանություն</i> | | 42 | | 6,5 | | 13,79 |
| <i>Քիմիա</i> | | 42 | | 6,8 | | |
| <i>Աշխարհագրություն</i> | | 42 | | 6,92 | | 13,3 |
| <i>Ինֆորմատիկա</i> | | 42 | | 6,69 | | |
| <i>ՆԶՊ և անվտանգ գործ.</i> | | 42 | | 8 | | |
| <i>Ընդամենը</i> | 40 | 42 | 6,91 | 6,43 | | 13,6 |

Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ

Քննական առարկաներ **Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների**

| | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը | | Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը | |
|--------------------------|--|-----------|--|-----------|
| | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. |
| <i>Մայրենի</i> | | | 8,63% | |
| <i>Մաթեմատիկա</i> | 16,2% | | | |
| <i>Հայոց լեզու</i> | | 2,89% | | |
| <i>Գրականություն</i> | | 5,5% | | |
| <i>Հանրահաշիվ</i> | | 3% | | |
| <i>Հայոց պատմություն</i> | | | | 5,5 |
| <i>Ռուսաց լեզու</i> | | 5,7 | | |
| <i>Անգլերեն</i> | | 5,5 | | |
| <i>Ֆիզիկա</i> | | 2,5 | | |
| <i>Կենսաբանություն</i> | | | | 23,4 |
| <i>Քիմիա</i> | | - | | - |
| <i>Աշխարհագրություն</i> | | 0% | | 0% |
| <i>Ճիզկուլտուրա</i> | | | | 6,4% |

Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ

2021-2022 ուստարի

2022-2023 ուստարի

| | 2021-2022 ուստարի | | 2022-2023 ուստարի | |
|--|-------------------|----------------|-------------------|----------------|
| | 1-ից 4-րդ դաս. | 5-ից 9-րդ դաս. | 1-ից 4-րդ դաս. | 5-ից 9-րդ դաս. |
| <i>Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների</i> | 32/167 19% | 18/217 8% | 17/153 15,1% | 15/222 6,7% |

| | | | | |
|--|---------------|----------------|----------------|------------------|
| <i>Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ</i> | 63/167 37% | 152/217 70% | 67/153 59% | 150/222 67,2% |
| <i>Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների</i> | 44/44 100% | 36/36 100% | 36/40 87% | 41/41 100% |
| <i>Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների</i> | - | - | - | - |
| <i>Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը</i> | - | 23 58,9% | - | 14/42 33,3% |
| <i>Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում</i> | - | 23/36 63,9% | - | 23/42 54,8% |
| <i>Ուսումնական տարվա ընթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների</i> | 8 | 13 | 11/153 7,1% | 7/222 3,1% |
| <i>-ՀՀ այլ հաստատություններ տեղափոխվածների թիվը</i> | - | - | 11 | 7 |
| <i>-այլ երկրների ուսումնական հաստատությունների տեղափոխվածների թիվը</i> | - | - | - | - |
| <i>Ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվն ըստ կրթական աստիճանների, այդ թվում՝</i> | - | - | - | - |
| <i>-հիվանդության, անկարողության պատճառով</i> | - | - | - | - |
| <i>-ընտանիքի սոցիալական վիճակի պատճառով</i> | - | - | - | - |
| <i>-սովորել չցանականալու պատճառով</i> | - | - | - | - |
| <i>-այլ պատճառներով</i> | - | - | - | - |

Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ`

| <i>Ցուցանիշ</i> | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|--|------------------------------|------------------------------|
| <i>Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը` հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ</i> | 7/386 1,8% | 0 |
| <i>Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացածների թիվը և տոկոսը</i> | 1/386 0,2% | 0 |
| <i>Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը` հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ</i> | 1/386 0,2% | 0 |
| <i>Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը</i> | 0 | 0 |
| <i>Միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը` հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ</i> | 0 | 0 |
| <i>Միջազգային օլիմպիադաներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը</i> | 0 | 0 |
| <i>Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը` հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ</i> | 59 | - |

2022-2023 ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են հետևյալ ուղղություններով և ապահովվել են հետևյալ արդյունքները`

| | Գործունեության տեսակ | Վերահսկողություն (նկարագիր) |
|----|--|---|
| 1. | Գործունեության մեջ դնելու համար նախապատրաստել ենք 2022-2023 ուստարվա I-IX-րդ դասարանների էլեկտրոնային մատյանները | Ապահովել ենք էլեկտրոնային մատյանների պատշաճ լրացման ընթացքը |

| | | |
|----|--|---|
| 2. | Ուսպլանին համապատասխան կազմել և տնօրենի հաստատմանն է ներկայացվել 2022-2023 ուստարվա I-IX-րդ դասարանների դասացուցակը 5-օրյա պարապմունքների համար: | Դասաբաշխումը և դասացուցակի կազմումը իրականացվել են հաստատության սանիտարական կանոնների և նորմերին համապատասխան |
| 3. | Վերջնական տեսքի է բերվել դասացուցակը, ձևավորվել դասարանների խմբերը, I-IX- րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների դասաբաշխումը լրացվել և ներբեռնվել է emis.am | Դասացուցակի և ժամանակացույցի առկայություն: Դասացուցակի ընթացիկ սպասարկում: Դասաբաշխման համապատասխանեցում: |
| 4. | Ստուգվել է էլմատյանների վարման վիճակը, ուսուցիչներին հանձնարարվել է թերությունները վերացնել ժամանակին: | Ապահովվել է էլեկտրոնային մատյանների պատշաճ լրացումը |
| 5. | Պարբերաբար ստուգվել է սովորողների դասահարցումները, գնահատականների առկայությունը, տնային հանձնարարությունների ծավալը, կատարումը և ստուգումը, հաճախումները | Իրականացվել է ուստարվա ընթացքում դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն |
| 6. | Ստուգվել է տարբեր առարկաներից տրված թեմատիկ և գործնական աշխատանքների քանակը և որակը, ինչպես նաև դրանց համապատասխանությունը ծրագրերին: | Իրականացվել է ուստարվա ընթացքում դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն |
| 7. | Ստուգվել է առարկայական ծրագրերի կատարումը, հետևողականություն է դրսևորվել դրա լիարժեք իրականացման և թերացումները վերացնելու ուղղությամբ: | Իրականացվել է ուստարվա ընթացքում դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն |

| | | |
|-----|---|--|
| 8. | <p>Ուստարվա ընթացքում 120- 200 ժամ բացակայություն ունեցող սովորողների վերաբերյալ անգրավոր տեղեկանք ներկայացվել տնօրենին: ա/ նախապատրաստել ենք քննությունների հարցատոմսեր բ/ կազմակերպել և անցկացնել նրանց քննությունները, ստուգողական գրավոր աշխատանքները, ստուգարքները</p> | <p>Հաշվետվության է ներկայացվել 120-200 ժամ բացակա ունեցող սովորողների քննական արդյունքների վերաբերյալ</p> |
| 9. | <p>Դասալսումներ միջոցով ստուգվել է սովորողների պատրաստվածությունը դասերին</p> | <p>Ուսումնասիրել և դիտարկել ենք սովորողների մոտ ձևավորված գիտելիքերի, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումները</p> |
| 10. | <p>Ամիսը մեկ անգամ մասնակցել ենք դասվարների, մ/մ նախագահների նախապես պլանավորված օրակարգերով սեմինար-խորհրդակցություններին</p> | <p>Իրականացրել ենք մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների</p> |
| 11. | <p>Կազմակերպել ենք ինտեգրված դասաժամեր՝ ուսուցիչ հոգեբան համագործակցումով</p> | <p>Ապահովել ենք ուսումնադաստիարակչական անխափան գործընթաց</p> |
| 12. | <p>Կազմակերպել ենք մասնախմբային շաբաթներ՝ հնարավորություն ընձեռելով մասնախմբին դրսևորելու մասնագիտական, մանկավարժական զանազան հմտություններ, հնարներ, մեթոդներ, ակտիվացնելու և բացահայտելու ուսուցիչների և սովորողների ներուժն ու ունակությունները</p> | <p>Իրականացրել ենք մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների</p> |
| 13. | <p>Մասնախմբի համար ապահովել ենք համագործակցային մեծ հնարավորություններ՝ կազմակերպելու և անցկացնելու բաց հրապարակային դասեր, առարկայական մրցույթներ</p> | <p>Ապահովել ենք ուսումնական պրոցեսի արդյունավետություն</p> |
| 14. | <p>Ներկայացրել ենք ուստարվա ընթացքում</p> | <p>Կազմել ենք հաշվետվություններ՝ ուսումնադաստիարակչական</p> |

| | | |
|--|--|--|
| | <p>ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության թվային արդյունքների ամփոփ հաշվետվություն</p> | <p>աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնվելով մեթոդական միավորումների ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա:</p> |
|--|--|--|

Աշխատանք մանկավարժական կադրերի հետ

| | Գործունեության տեսակ, պլանավորում | Վերահսկողություն (նկարագիր) |
|----|---|---|
| 1. | <p>Ուսուցիչներին ապահովել ենք առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ</p> | <p>Ապահովել ենք ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացը</p> |
| 2. | <p>Երաշխավորել և տնօրենի հաստատմանն ենք ներկայացրել մասնախմբերի աշխատանքային տարեկան պլանները</p> | <p>Ապահովել ենք ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացը</p> |
| 3. | <p>Ստուգել ենք ուսուցիչների թեմատիկ պլանները</p> | <p>Ապահովել ենք ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացը</p> |
| 4. | <p>Կազմակերպել և իրականացնել ենք մանկավարժական ընթերցումներ, մեթոդական զեկուցումներ և սեմինարներ, որոնք նպաստել են ուսուցիչների մեթոդամանկավարժական որակի բարձրացմանը</p> | <p>Ապահովել ենք ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացը</p> |
| 5. | <p>Մեթոդական օգնություն ենք ցույց տվել ուսուցիչներին դասալսումների միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուսուցիչ-սովորող հարաբերությանը, համագործակցային մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասի գործընթացին</p> | <p>Իրականացրել ենք ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն</p> |

| | | |
|----|--|--|
| 6. | Վերահսկել ենք փոխադարձ դասալսումների կատարումը և արդյունքները քննարկել ենք մ/մ նիստերում | Իրականացրել ենք ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողություն |
|----|--|--|

Աշխատանք սկսնակ, ոչ փորձառու ուսուցիչների հետ

| | Գործունեության տեսակ, պլանավորում | Վերահսկողություն (նկարագիր) |
|----|--|--|
| 1. | Սկսնակ ուսուցիչներին պահել ենք ուշադրության կենտրոնում, նրանց համար հաճախակի կազմակերպել փորձի փոխանակման դասեր | Շարունակական աջակցության տրամադրում սկսնակ ուսուցիչներին |
| 2. | Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ենք ցույց տվել սկսնակ ուսուցիչներին՝ հատուկ ուշադրություն դրձնելով ուսուցիչ-աշակերտ հարաբերությանը, համագործակցային մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասի գործընթացին | Ապահովել և վերահսկել ենք ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրմանը |

Աշխատանք առարկայական մասնախմբերի հետ

| | Գործունեության տեսակ, պլանավորում | Վերահսկողություն (նկարագիր) |
|----|--|---|
| 1. | <p>Մ/մ-ների ավելի արդյունավետ դարձնելու նպատակով՝ հանձնարարել ենք</p> <p>ա / տարեկան աշխատանքային պլանները կազմելիս հաշվի են առնել կրթակարգի պահանջները ,</p> <p>բ/ ապահովել են սովորողների՝ առարկայական չափորոշյով նախատեսած պատրաստվածությանը ներկայացվող նվազագույն պահանջները,</p> <p>գ/ մ/մ-ների նիստերի օրակարգերը նախապես պլանավորվել են</p> <p>դ/ համագործակցելով միմյանց հետ՝</p> | <p>Ապահովել ենք ուսումնաստիարակչական արդյունավետ աշխատանքների կազմակերպման գործընթացը</p> |

| | | |
|----|--|---|
| | կազմակերպել ու անց կացրել ինտեգրված դասեր | |
| 2. | Նոր ուստարվա աշխատանքները պլանավորելու և կազմակերպելու նպատակով մասնախմբերում անցկացրել ենք խորհրդակցություններ | Ապահովել ենք ուսումնաստիարակչական արդյունավետ աշխատանքների կազմակերպման գործընթացը |
| 3. | Մ/մ նախագահի հետ կատարել ենք տարբեր առարկաների դասավանդումներ և արդյունքները քննարկել ենք մ/մ նիստերում, սովել ենք համպատասխան հանձնարարականներ և հետևել կատարմանը | Ապահովել և վերահսկել ենք ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման գործընթացում ուսուցման նոր մեթոդների տեխնոլոգիաների ներդրման գործընթացը |
| 4. | Մ/մ նիստի ժամանակ հատկապես ուշադրության ենք հրավիրել S2S միջոցների կիրառմամբ անցկացվող դասերի քննարկումներին, խրախուսել դրանց ճիշտ և նպատակային անցկացումը | Ապահովել և վերահսկել ենք ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման գործընթացում ուսուցման նոր մեթոդների տեխնոլոգիաների ներդրման գործընթացը |
| 5. | Մասնախմբերի հանձնարարել ենք քննական հարցատոմսեր կազմել 120- 200 ժամ բացակայությունների և վերաքննությունների | Ներկայացվել են հաշվետվություններ 120-200 ժամ բացակա սովորողների ունեցող քննական արդյունքների վերաբերյալ |

Ուսումնամեթոդական աշատանքների կազմակերպումը

1. Դպրոցում գործող լավագույն օղակը համարել մանկավարժական խորհուրդը
2. Հետևել ենք ծրագրերի և դասագրքերի ճիշտ ընտրությանը, դպրոցական ժամաքանակի ճիշտ բաշխմանը
3. Կատարել ենք դպրոցական բաղադրիչի նպատակային բաշխում
4. Կազմակերպել ենք զեկուցումներ և սեմինարներ՝ ուսումնական և դաստիարակչական թեմաներով
5. Հետևել ենք մասնախմբերի աշխատանքներին և նիստերի ըստ ժամանակացույցի վարմանը
6. Արձագանքել ենք "Կենդուրու միջազգային մաթեմատիկական մրցույթին /առկա և հեռակա/
7. Արձագանքել ենք "Մեղու" մայրենիի մրցույթին /առկա և հեռակա/

8. Ճիշտ կազմակերպել ենք միասնական առարկայական օլիմպիադաների հայտագրումը
10. Ժամանակին կազմակերպել ենք առարկայական օլիմպիադաների՝ ներդպրոցական փուլը, ապահովել լավագույնների մասնակցությունը տարածքային փուլին
11. Արձագանքել ուսումնական տարվա ընթացքում՝ կազմակերպվող մրցույթներին

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Դպրոցը 2023-2024 ուսումնական տարում ունի 26 մանկավարժական աշխատողներ: Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն համապատասխան կրթություն: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5-ը մասնակցում է ուսուցիչների հերթական ատեստավորման նպատակով կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին և ատեստավորվել են: Դպրոցն ունի կամավոր ատեստավորված 2 ուսուցիչ՝ միջին շեմը հաղթահարած:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է մրցույթային կարգով՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի: Նախորդ տարիներին կադրային քաղաքականությունը կրել է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը պարբերաբար համալրվել է նոր բարձրակարգ մասնագետներով: Դասապրոցեսի կառավարման արդիականացման նպատակով ստեղծվել են յուրաքանչյուր առարկայի էլեկտրոնային ռեսուրսների պաշարներ:

Հաստատության մանկավարժական աշխատակազմը հետևողական աշխատանքներ է տանում կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին համարժեք արձագանքելու նորարարական մոտեցումների ներդրման, արդի տեխնոլոգիաներին տիրապետելու հմտություններ ձևավորելու և կիրառելու առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելու և համալրելու ուղղությամբ: Աշակերտակենտրոն մեթոդների և հնարների կիրառումը դասավանդման ընթացքում դարձել է գերակա գործելառձ, որը իր ազդեցություն է թողել ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը ավելի բարձր մակարդակ տեղափոխելու առումով:

| <i>Ցուցանիշը</i> | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/ |
|--|----------------------|----------------------|--|
| <i>Ուսուցիչների ընդհանուր թիվը</i> | 26 | 28 | Աճ |
| <i>Ուսուցիչների միջին շաբաթական ճանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը</i> | 20.1 | 19 | Նվազում |

| Ցուցանիշը | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան /աճ կամ նվազում/ |
|--------------------|----------------------|----------------------|---|
| Մինչև 30 տարեկան | 4 | 4 | Անփոփոխ |
| 31-40 տարեկան | 6 | 5 | Նվազում |
| 41-50 տարեկան | 5 | 5 | Անփոփոխ |
| 51-55 տարեկան | 2 | 3 | Աճ |
| 56 տարեկան և ավելի | 9 | 11 | Աճ |

Տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ՝

| Ցուցանիշ | 2022-2023 ուստարի |
|---|----------------------|
| Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | 27/28 96% |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և տոկոսը | 28/28 100% |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 |
| Գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 |
| Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը | 9 34,6% |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 |
| Ուսուցիչների միջին տարիքը | 48.2 |
| Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 |

| | |
|---|---------------|
| Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը | 28/28 |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը | 28/28 100% |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը | 28 |
| Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը | 57 |
| Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը | 864 |
| Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը, | 12 |
| Նախարարության, ինչպես նաև նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ անցկացվող մրցույթներին մասնակցած ուսուցիչների թիվը և տոկոսը: | 0 |
| Նախարարության, ինչպես նաև նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ անցկացվող մրցույթներում մրցանակներ ստացած ուսուցիչների թիվը և տոկոսը | 0 |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> Բարձրագույն կրթություն ունեցող և ատեստավորված ուսուցիչներ Մասնագիտական համապատասխան որակավորմամբ աշխատակազմ կամավոր ատեստավորված ուսուցիչներ Դասավանդման ընթացքում սովորողակենտրոն մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններին տիրապետող ուսուցիչներ Վարպետության դասեր անցկացնող և սկսնակ ուսուցիչների հետ մեթոդամանկավարժական օժանդակության պատրաստակամություն դրսևորող | <ul style="list-style-type: none"> Ուսուցչի ծանրաբեռնված աշխատանք Դասարանում աշակերտների մեծ թվաքանակ Ուսուցման և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների բարելավման կարիք Ուսուցիչների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման չափանիշների վերանայում Մոտիվացիայի պակաս Երիտասարդ կադրերի համալրման կարիք SZS նոր ծրագրերի լիարժեք կիրառման հմտությունների բարելավման անհրաժեշտություն Հետազոտական աշխատանքներ |

| | |
|---|--|
| <p>մասնագետներ</p> <ul style="list-style-type: none"> • Դասի ընթացքում SՏՏ միջոցների և էլեկտրոնային ռեսուրսների օգտագործում • Գործընկերների հետ համագործակցության և փորձի փոխանակման ձևերի հաստատված մշակույթի առկայություն, խնդիրները մասնակցային ձևաչափով լուծելու պատրաստակամություն | <p>կատարելու հմտությունների զարգացման կարիք սովորողների՝ նախագծային աշխատանքներ կատարելու, առաջնորդման կարողությունների բարելավման անհրաժեշտություն</p> <ul style="list-style-type: none"> • Կամավոր ատեստավորման դիմելու մոտիվացիայի պակաս և մտավախություն |
|---|--|

4. ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Դպրոցը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել համայնքային կյանքին: Համայնքի կողմից դպրոցին ցուցաբերվել են ոչ մեծ աջակցություններ: Համայնքի հետ համագործակցությունների ուղղությունները ներկայացված են աղյուսակային վերլուծությամբ՝

| Դպրոցի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնականության բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը | Ամսաթիվ | Ներդրման չափը | Մեկնաբանություն |
|--|------------------------------|-------------------|-------------------------------|
| Աղբահանության կազմակերպում Ռոտզման ջրի հարցի կազմակերպում | 2021-2022թթ. 2019-2021թթ. | 27000դ. 9000դ. | Համայնքապետարանի և ԶՕԻ կողմից |

| Համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը | Ամսաթիվ | Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը | Մեկնաբանություն |
|---|----------------------------------|---|-----------------|
| 1. Շաբաթօրյակներ | Գարուն, աշուն 2022-2023թթ. | 90-95% | |
| 2. Ծառատունկ | Գարուն 2023թ. | 60-70% | |
| 3. Մասնակցություն հուշարձանների միջազգային օրվան | 2023թ. | 95% | |
| 4. Մասնակցություն համայնքում կազմակերպված շախմատի մրցումներին | 2022-2023թթ. | 5% | |


| | | | |
|---|--------------|--------|-----------------|
| 5. Մասնակցություն համայնքում կազմակերպված ասմունքի, երգի, պարի փառատոններին | 2022-2023թթ. | 25-30% | |
| 6. Մասնակցություն համայնքային շաբաթօրյակներին և ծառատունկին | 2022-2023թթ. | 90% | Տեղանքի մաքրում |

| Դպրոցի կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, դրանց թիվը | Ամսաթիվ | Մասնակից սովորողների ու աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը |
|---|---------|---|
| 5 միջոցառում | 2022թ. | 96%/80-90 ծն. |
| Գիտելիքի օր | 2022թթ. | 84% |
| Շքերթ նվիրված անկախության տոնին | | |
| Հիշատակի միջոցառում | 2022թ. | 30%/40 ծն. |
| հուշարձանում | 2023թ. | 60% |
| Այբբենարանի տոն | 2023թ. | 99%/60 ծն. |
| Բարեկենդան | 2023թթ. | 30%/50 ծն. |
| Վերջին դաս | | |
| Հունիսի 1 | | |

Ուսումնական աշխատանքների կազմակերպման, դպրոցի առջև ծառայած խնդիրների լուծման, առկա դժվարությունների հաղթահարման և կանխանշված նպատակների իրագործման համար կարևորվել է դպրոցի համակարգված աշխատանքը կրթության պետական կառավարման լիազոր մարմինների, վարչական շրջանի, ծնողական համայնքի, տարբեր շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման ուղղությամբ: Համատեղ քննարկումներն ու տարբեր միջոցառումներում ներգրավվածության ապահովումը նպաստել են մասնակցային մշակույթի ձևավորմանը, դպրոցի հեղինակության բարձրացմանը, դպրոցի գործունեության թափանցիկության ապահովմանը: Այս տարիների ընթացքում դպրոցում ձևավորվել է համայնքային ակտիվ դպրոցին ներկայացվող պահանջներին համապատասխան միջավայր:

Լիազոր մարմնի և վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները ևս հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային-հետազոտական աշխատանքներ համայնքի առանձնահատկությունների, կարիքների բացահայտման ուղղությամբ:

Համագործակցության որոշ շրջանակներ ներկայացվում են ստորև գծապատկերով՝



| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄ |
|---|---|
| <p>Մշտական համագործակցություն տարբեր կառույցների հետ՝</p> <ul style="list-style-type: none"> • ԿԳՄՍՆ • ԳԹԿ • ԿՏԱԿ • Տարածաշրջանի այլ դպրոցներ • ՏՄԱԿ • ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և այլ հաստատություններ • ՀԿ-ներ և այլ կառույցներ • Համագործակցության շրջանակներում տարբեր համատեղ միջոցառումների կազմակերպում • Արդյունավետ հաղորդակցություն համայնքի և տարբեր կառույցների հետ, | <ul style="list-style-type: none"> • Միջազգային կառույցների հետ համագործակցության փորձի բացակայություն • Դպրոցների համար հայտարարված դրամաշնորհային և բարեգործական ծրագրերի սահմանափակ առկայություն կամ բացակայություն • Համայնքի կողմից սոցիալական ծրագրերի իրականացման պակաս |

| | |
|--|--|
| <ul style="list-style-type: none">• Համայնքի հետ մշակութային մի շարք ծրագրերի իրականացում• Դպրոցի գործունեության կազմակերպում կրթության կառավարման մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխան• «Արմաթ» լաբորատորիայի հետ համագործակցության առկայություն: | |
|--|--|

5.ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՇԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2022-2023 ուստարում ծնողական խորհուրդը ակտիվորեն մասնակցել է դպրոցի բոլոր աշխատանքներում:

Տարեսկզբին հրավիրվել է համադպրոցական ծնողական ժողով, որի ընթացքում ընտրվել է ծնողխորհրդի նախագահ և քարտուղար, բոլոր դասարաններում կազմակերպվել է դասարանական խորհուրդներ (4-5 հոգուց բաղկացած):

Ծնողխորհրդի բոլոր անդամները ծանոթացել են խորհրդի կանոնադրությանը, «Հանրակրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքներին:

Ծնողխորհուրդը օգնել է ծնողագուրկ երեխաներին շորերով, կոշիկներով, գրենական պիտույքներով: «Սոցիալական անապահով ընտանիքների փոխհատուցում» ծրագրով, անապահով ընտանիքների սովորողներին հատկացվել է դասագրքերի համար ներդրումային գումար՝ 146300 դրամի չափով:

Ապահովվել է դպրոցի և սովորողների ընտանիքների սերտ կապն ու համագործակցությունը, կազմակերպվել է քննարկում «Սովորողի իրավունքներն ու պարտականությունները» թեմայով, իրազեկվել է կրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին, մասնակցել է արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին (շաբաթօրյակներ, ծառատունկեր, դպրոցի կանաչապատման աշխատանքներ): Կազմակերպվել են բազմաթիվ էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր, թանգարաններ, աջակցվել է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, աջակցել է ինքնակառավարման մարմինների գործունեության և նրանց օգնություն ցուցաբերել, աջակցել է դպրոցում կազմակերպված բոլոր միջոցառումները:

«Դպրոցական տաք սնունդ» գործող ծրագրին ցուցաբերել է աջակցություն (I-IV դասարաններ):

| Ցուցանիշ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|--|----------------------|----------------------|
| Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ. | 5 10% | 6 50% |

| | | |
|--|-----|-----|
| Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը | 17 | 27 |
| Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը | 0 | 0 |
| Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուս տարվա ընթացքում | 5 | 8 |
| Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում | 0 | 0 |
| Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը | 72% | 68% |
| Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am , http://ktak.am , http://www.armedu.am , http://forum.armedu.am/ , http://lib.armedu.am , matyan.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության | 98% | 98% |

2022-2023 ուստարում հրավիրվել է համադպրոցական աշակերտական ժողով, որի ընթացքում ձևավորվել է աշակերտական խորհրդի կազմը, ընտրվել է աշակերտական խորհրդի նախագահ և քարտուղար՝ փակ, գաղտնի քվեարկությամբ:

Գումարվել են դասարանական ժողովներ և 6-9-րդ դասարաններում ընտրվել են դասարանական աշակերտական խորհուրդներ: Կազմավորվել են հանձնախմբեր.

1. Ուսումնադաստիարակչական
2. Ռազմահայրենասիրական
3. Իրավակարգապահական
4. Մշակութային
5. Առողջապահական
6. Սոցիալական

Աշակերտները ծանոթացել են դպրոցի ինքնակառավարման գործադիր մարմնի՝ աշակերտական խորհրդի կանոնադրության հետ:

Համագործակցել են դասղեկների, ծնողական խորհրդի, անչափահասների գծով տեսուչի հետ: Ծանոթացել են «Երեխայի իրավունքների մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների դրույթներին:

Հետևել են հիգիենայի պահպանման կանոններին, մասնակցել են 8-9-րդ դասարաններում «Թմրանյութը՝ դարի չարիք» դասախոսությանը, որը վարում է ոստիկանը:

Մասնակցել են ն՛ դպրոցական, ն՛ տարածքային, ն՛ մարզային օլիմպիադաներին և գրանցել են հաջողություններ:

Մասնակցել են «Մեզու», «Կենգուրու» մրցույթներին, շահել մրցանակներ և գրավել պատվավոր տեղեր:

Մասնակցել են դպրոցում բռնության, օտարման, հալածանքի կանխարգելմանն ուղղված միջոցառումներին: Դաս-միջոցառումներ «Ո՛չ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին»: Հանդիպել են ոստիկանների հետ «Ոչ բռնություններին», «Թրաֆիքինգ, դրա հետևանքները» թեմաներով զրույցներին:

Հետևել են բացակայություններ, ուշացումներ ունեցող աշակերտներին, տարել նրանց հետ ուղղիչ աշխատանքներ:

Կազմակերպել են բազմաբնույթ միջոցառումներ ն՛ դասարանական ն՛ համադպրոցական: Մասնակցել են տարածքային բոլոր միջոցառումներին:

Մեծ նվաճումներ են գրանցել սպորտի բնագավառում՝ հատկապես շախմատի ասպարեզում:

Ակտիվորեն մասնակցել են համահայկական և համադպրոցական շաբաթօրյակներին, մասնակցել են ծառատունկին:

Հետևել են դպրոցի ներքին կարգապահական կանոններին:

Կազմակերպել են միջոցառումներ

✓ Գիտելիքի օր

✓ Աշնան միջոցառումներ

✓ Ամենօրյա միջոցառումներ տարրական դասարաններում «Ուրախ տոնածառ», «Ուրախ ժպիտներ»

✓ Կատարվել է հիշատակի մոմավառություն նվիրված 44-օրյա պատերազմում զոհված հերոս տղաներին

✓ Ուսուցչի տոն

✓ Բաց դաս տեխնոլոգիայից

✓ Հրաժեշտ այբբենարանին

✓ Կլոր սեղան աշակերտական կողմից «Ինչքան են մեզ ճանաչում ուսուցիչները»

✓ Սուրբ Զատիկ

✓ Վերջին զանգ

✓ Սպորտլանդիա և՛ մեծերի, և՛ փոքրերի համար, որտեղ տարածքայինում գրավեցին առաջին տեղը, իսկ մարզայինում՝ երկրորդ:

Ունեն մասնակցություն ամռանը կազմակերպված միջոցառումներին:

Ցուցանիշ

2022-2023
ուստարի

| | |
|---|---|
| <i>Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցություն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը</i> | 2 |
| <i>Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը</i> | 4 |
| <i>Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումների թիվը</i> | 5 |
| <i>Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը</i> | 2 |

Ըստ դպրոցի կանոնադրության՝ մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները: Յուրաքանչյուր ուսումնական տարին սկսելուց առաջ՝ օգոստոս ամսվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում, ձևավորվել է մանկավարժական խորհրդի կազմը և հաստատվել տնօրենի կողմից: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի այն նիստերին, որի ընթացքում քննարկվել են սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցեր, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվել են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ: Մանկավարժական խորհրդի կողմից երկու ներկայացուցիչ ընդգրկված

